# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2

# № ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

30 .03.2020թ.

ք. Երևան

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է
նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ-ը, ի
դեմս տնօրեն Սարգիս Թարվերդյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս
կողմից, հիմք ընդունելով 26.02.2019թ. կնքված № ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-1 գնման պայմանագրի (այսուհետև՝
Պայմանագիր) 8.15 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր)
հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի
№ 1 Հավելվածով նախատեսված ժամկետներում և ծավալներով Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին որպես
սեփականություն հանձնել Պայմանագրի № 1 Հավելվածով նախատեսված տեսակի և որակի ապրանք (այսուհետև՝ Ապրանք),
իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի մատակարարած Ապրանքի յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է սույն
Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 33971992,56 (երեսուներեք միլիոն ինն
հարյուր յոթանասունմեկ հազար ինն հարյուր իննսուներկու ամբողջ հիսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը
ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված,
ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետին համապատասխան, բայց ոչ
ուշ քան 10.12.2020թ.:

## 3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման
պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:
3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի
իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի
պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:
3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն
չձեռք բերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:
3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր
իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1 և № 2 Հավելվածները
բաղկացած են 1 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:
3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է
ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում
ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

## 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 02522157
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Վ.Դավթյան 13
Էվոկաբանկ ՓԲԸ
Հ/Հ 1660002787610100
ՀՎՀՀ 05523921
տնօրեն

Ս.ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Հավելված N 1
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-1 N 2 համաձայնագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Գինը (դրամով) | Ընդհանուր գումար | Անհրաժեշտ քանակը, 2020թ ըստ ամիսների | | | | | | | | Քանակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | |
| 1 | ջեմեր (Ջեմ) | կգ | 352.9 | 5814733.30 | | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 1477 | | 16477 |
| 2 | ջեմեր (Ջեմ) | կգ | 333.78 | 5500026.84 | | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 1478 | | 16478 |
| 3 | ջեմեր (Ջեմ) | կգ | 363.94 | 5997003.32 | | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 1478 | | 16478 |
| 4 | մուրաբա (Մուրաբա մորու) | կգ | 772.79 | 2935829.21 | | | | | | | 2000 | 1799 | 3799 |
| 5 | մուրաբա (Մուրաբա բալի) | կգ | 582.42 | 2212613.58 | | | | | | | 2000 | 1799 | 3799 |
| 6 | մուրաբա (Մուրաբա հոնի) | կգ | 603.23 | 2291670.77 | | | | | | | 2000 | 1799 | 3799 |
| 7 | տոմատի կետչուպ (Կետչուպ) | կգ | 561.62 | 9220115.54 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 3000 | 1417 | | | 16417 |

Հավելված N 2
№ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-7/3-1 N 2 համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Հ/հ | Գնման առարկան | CPV-ի կոդը | Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ* | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր |
| 1 | ջեմեր (Ջեմ) | 15332290/1 | | 1058700 | 2117400 | 3176100 | 4234800 | 5293500 | 5814733.3 | 5814733.30 | 5814733.30 | 5814733.30 |
| 2 | ջեմեր (Ջեմ) | 15332290/2 | | 1001340 | 2002680 | 3004020 | 4005360 | 5006700 | 5500026.84 | 5500026.84 | 5500026.84 | 5500026.84 |
| 3 | ջեմեր (Ջեմ) | 15332290/3 | | 1091820 | 2183640 | 3275460 | 4367280 | 5459100 | 5997003.32 | 5997003.32 | 5997003.32 | 5997003.32 |
| 4 | մուրաբա (Մուրաբա մորու) | 15332230/1 | | | | | | | 1545580 | 2935829.21 | 2935829.21 | 2935829.21 |
| 5 | մուրաբա (Մուրաբա բալի) | 15332230/6 | | | | | | | 1164840 | 2212613.58 | 2212613.58 | 2212613.58 |
| 6 | մուրաբա (Մուրաբա հոնի) | 15332230/8 | | | | | | | 1206460 | 2291670.77 | 2291670.77 | 2291670.77 |
| 7 | տոմատի կետչուպ (Կետչուպ) | 15871230/1 | 1684860 | 3369720 | 5054580 | 6739440 | 8424300 | 9220116 | 9220115.54 | 9220115.54 | 9220115.54 | 9220115.54 |

* Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

ՅՈՒՀՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Արարատ Սննդի Կոմբինատ» ՍՊԸ
տնօրեն

Ս.ԹԱՐՎԵՐԴՅԱՆ